

Ի ՅԻՇԱՏԱԿ ՍՐԲԱԶԱՆ ԹԱԳԱԳՐՈՒԹԵԱՆ
ՆՈՅԻՆ, ԿԱՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՑ՝

ՆԻԿՈԼԱՅ Բ-Ի Ե ԱՂԵՔՍԱՆԳՐԱ
ՖԵՈԳՈՐՈՎՆԱՅԻ,

• Երթայք, տոնք զկայսերն կայսեր եւ
զԱստուծոյն Աստուծոյ •

Մատթ. ԻԲ. 21:

Աւետարանական այս մեծ պատգամը շատերի համար գուցէ ուրիշ ոչինչ է, բայց եթէ մի երկրորդի, կամ խորագէտ դարձուած միայն, օրով Փրկիչն ի դերեւ է հանում փարիսեցիների կողմից իւր դէմ լարած որոգայթը: Սակայն սա այն բազմաթիւ անգամ խօսքերից մէկն է, որոնք աւետարանը կեանքի զիր են դարձնում բոլորի ամենաբնական նշանակութեամբ, որոնք իբրեւ մի փայլակնաձև լուսոյ ճառագայթ մեր երկրաւոր խաւար ասպարէզի վերայ մէկ անգամից անհուն տարածութիւններ են լուսաւորում՝ պարզում մեր առաջ կեանքի ամենակարեւոր և կնճռոտ խնդիրները: Դնչպէս որ առ Աստուած և առ ընկերն սիրոյ կրկնակի պատուէրը ներկայանում է մեզ իբրեւ առաջնորդող սկզբունք ընկերական կեանքի համար և ցոյց է տալիս թէ ինչպէս պէտք է ուղղուած լինի մեր յարաբերութիւնը դէպի մարդիկ, որպէս զի արժանի գտնուենք մեր Ամենակալ Հօր հետ յարաբերութիւն ունենալու՝ այնպէս և առ կայսրն ու առ Աստուած կրկին հպատակութեան այս պատուէրը առաջնորդող սկզբունք է հասարակական, քաղաքացիական կեանքի համար. նա սովորեցնում է, թէ ինչպէս պէտք է քաղաքավարենք այս աշխարհում մենք, որ կոչուած ենք երկնաւոր Թագաւորութեան քաղաքացիներ լինելու: Երկու դէպքում ևս աւետարանը մարդկայինն ու աստուածայինը իրար մօտ բերելով քրքրեւոր է և ընդհանրացնում այն, ինչ որ Հին Կտակարանի մէջ մասնաւոր, առանձնական նըշանակութիւն էր միայն ունեցել: Դարայէրացուն ևս պատուիրուած էր հնազանդ լինել

և չհպարտանալ իշխանութեան առաջ. Թագաւորի անձը նուիրական և անձեռնմխելի էր նորա համար. Տիրոջ Օծեալին հայհոյել կամ ձեռք բարձրացնել Եփրա դէմ՝ մահացու մեղք էր համարուում. բայց հրեայ ժողովրդի տեսակետով օրինական, Տիրոջ կողմից կարգուած իշխանութիւն յարայէլի Թագաւորն էր միայն և նորան հնազանդելը միայն պարտաւորեցուցիչ, մինչդեռ ամէն օտար իշխանութիւն բռնութիւն էր և ուրեմն կարելի էր խոյս տալ նորա հպատակութիւնից և ընդդիմանալ նորան: Զրիստոս այսպիսի խտրութիւն չէ դրնում. «Ամենայն անձն, որ ընդ իշխանութեամբ է, ի հնազանդութեան կացէ», պատուիրում է Եփր Կտակարանը և հաստատում այդ պատուէրն այն հիման վերայ, թէ «ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ, և որ ենն՝ յԱստուծոյ կարգեալ են»:

Եւ սակայն, եթէ աւետարանը թշնամուն իսկ սիրել պատուիրելով, անշուշտ տասնապատիկ աւելի մեծ և վսեմ սէր է պահանջում դէպի մերձաւորը, քան առաջ էր իշխանութեան նկատմամբ ևս որչափ աւելի մեծ և ջերմեռանդ պէտք է լինի Եփրա պահանջած հնազանդութիւնը, երբ մեր իշխանաւորն արդարեւ «Աստուծոյ պաշտօնեայ է ի բարիս», զիտակից իւր իշխանութեան Աստուծոյ կողմից ընդունած լինելուն, և, մեր առաջ իբրեւ Տիրոջ Օծեալ ներկայանալով, երգուում ու պատրաստակամութիւն է յայտնում՝ Եփրա շնորհօք, Եփրա օրինօք, Եփրա արգալութեամբ կառավարելու և դատելու — Եփրայ Թուականի մայիս 14-ը այն յիշատակաց արժանի օրն էր, երբ լայնածաւալ Ռուսիոյ Մեծազօր Կայսրը և մեր Ամենաբարեպաշտ Թագաւորը վերանորոգեց Երկնաւոր Տիրոջ սեղանի առաջ իւր մեծագործ նախնեաց այս ջերմեռանդն խոստովանութիւնը և Ամենակալ Արարչի ձեռքից Թագ և իշխանութիւն առնելով՝ քարոզեց ի լուր աշխարհի, թէ ինքն և իւր տունը Տիրոջ հետ լինել և Տերամբ միայն զօրանալ կամենում են: Ի՞նչ աւելի պատեհ առիթ և աւելի խորհրդաւոր մի ժամ յիշեցնե-

լու համար մեծ պետութեան բոլոր հաւատա-
րիմ հպատակներին՝ տալ զկայսերն կայսեր:

Արդ ի՞նչ է պատկանում կայսեր և ի՞նչ
պէտք է տալ Նորան: Այն փարիսեցիները ո-
րոնք Փրկչի մօտ եկան և հարկի համար հար-
ցրին համոզուած էին անշուշտ թէ հարկ
տալ կայսեր պէտք չէ, թէ ինչ որ նա առ-
նում է յափշտակութիւն է: Փրկչն ամենա-
պարզ օրինակով ցոյց տուաւ նոցա համոզման
անարդար և անհեթեթ լինելը:—Մարգիկ ա-
ղատ են իրենց ցանկութեան համեմատ կար-
գաւորելու իրենց անձնական և ընտանեկան
կեանքը: Բայց դուրսը հասարակութեան մէջ,
օտար մարդոց հետ յարաբերութիւն ունենա-
լու համար հարկաւոր են որոշ կարգ ու կա-
նոններ: որոնք չափ ու սահմանի ներքոյ դը-
նեն նոցա փոխադարձ գործունէութիւնը և
ապահովեն այդ գործունէութեան արդիւնքն
անարդար զրկումների դէմ: Պետութիւնն է,
որ այդպիսի կարգեր ու կանոններ է սահմա-
նում և հաստատուն պահում: որ ապահո-
վում է անհատի իրաւունքներն ու սեփա-
կանութիւնը: Իսկ քաղաքակիրթ հասարա-
հութեան մէջ կեանքի և գործունէութեան
զխաւոր շարժիչը բոլոր յարաբերութիւններին
ընթացք և ուղղութիւն տուողը դրամն է:
Այս ուրեմն իրաւամբ դրամները կրում են
իրենց վերայ կայսեր պատկերը կամ գիրը: այդ
նշան է, թէ կայսրը որ պետութեան դադա-
փարական մարմնացումն է՝ անձնաւորեալ ներ-
կայացուցիչը իւր հովանու ներքոյ է առնում
հասարակական կեանքը: Թէ իւրաքանչիւր
անհատ որ դրամ ունի իւր ձեռքում պէտք
է պետութիւնից ստացած համարէ այդ հա-
րաստութիւնը իրրեւ հասարակական գոյքի մի
մաս՝ իւր առանձին գործունէութեամբ շահե-
ցնելու համար: պէտք է հետեւաբար իւր պար-
տականութիւնը համարէ՝ ստացածի փոխարէն
տոկոսիք կամ հարկ վճարելու պետութեան:
Ահա այս պարտաւորութիւնն է, որ յիշեցը-
նում է Փրկչը փարիսեցիներին: Եւ մի՞թէ
արդարեւ նոքա այսպիսի պարտաւորութիւն
չունէին: Հռովմի տիեզերական իշխանութիւ-

նը հաղորդակցութեան արձակ ծանապարհ էր
բաց արել ժամանակակից բոլոր մանր ազգերի
համար: հռովմէական կայսեր դրոշմը կրող դը-
րամներով հրեաները առեւտուր անելը վաճա-
ռականական յարաբերութիւն հաստատել կա-
րող էին քաղաքակիրթ աշխարհի բոլոր անկիւն-
ներում: Փարիսեցիները հաղնում էին հեռու
երկրներից բերած մետաքսն ու ասուին և
իրենց քղանցքը երկարեցնում վայելում էին
այդ մեծ պետութեան քաղաքացի լինելու բո-
լոր առաւելութիւններն ու բարիքները: Բայց
չէին կամենում իրենց հպատակութիւնն օրի-
նապէս ընդունել: Եւ իրենց անձնահաճ՝ կար-
ծիքներն ու ձգտումները նոքա պաշտպանում
էին իսրայէլի Աստուծոյ անունով:—Ինչպէս
կարող էր մի օտար բռնաւոր Աստուծոյ ըն-
տրեալ ժողովրդի վերայ իշխել ինչպէս էր
համարձակուում նա սուրբ քաղաքը պղղ-
ծել հեթանոսութեան նշաններով: Եթէ Բի-
սուս արդարեւ քրիստոս էր՝ ակնկալեալ Մե-
սիան, Աստուծոյ մանապարհը ճշմարտութեամբ
ուսուցանողը, նա չպէտքէ տանէր այդ յանդգ-
նութիւնը: այդ անօրէն ոտնահարումը ճշմա-
րիտ Աստուծոյ իրաւանց:—Այսպէս էին մտա-
ծում փարիսեցիները և Փրկչի ինչ լի-
նելը մերկացնելու զիտումով Նորան են զիմում:
Նոքա զիմում են նոյն եղանակաւ, ինչ եղա-
նակաւ հրապուրել են իրենց գործիչներին ա-
մէն ժամանակի ռամկավարները՝ շոյելով բնա-
կան մարդու թոյլ կողմը, անձնավստահու-
թեան և անձնապատշաճութեան զգացումնե-
րը:—Ճշմարիտ ես—և ոչ է քեզ փոյթ զու-
մեքէ: ով որ ուղիղն ասելուց և գործելուց
չի քաշուում, որ երկրի զօրեղների առաջ էլ
պատրաստ է ճշմարտութիւնը խոստովանելու՝
պէտք է նաեւ քաջութեամբ ասպարէզ ելնէ և
բռնաւորի դէմ բողոքէ, նորա հպատակեցուցիչ
լուծը խորտակել է:

Եւ ահա ըստ երեւութին անեղանելի
զրուութեան մէջ է Փրկչը:—Եթէ Աստուծոյ
տան պատիւը, Աստուծոյ ժողովրդի իրաւունք-
ները պաշտպանել պէտք էր, ո՞վ աւելի նա-
խանձախնդիր էր իւր չօր տան պատուին, քան

նոյն ինքն Աստուծոյ Միածին Որդին ո՞վ աւելի կարեկից և տեղեակ իւր ժողովրդի ցւելերին քան Նա որ իւր բոլոր երկրաւոր կեանքն անցրել էր իսրայէլի կորուսեալ ոչխարներն որոնելով որ արտուստաթոր աչքերով ողբում էր Երուսաղէմի անխուսափելի կործանումը: Մի քանի տասնեակ տարի յետոյ նորա հաւատարիմ աշակերտներից մէկը խօսք չէր գտնում Հռոմի այդ մեծ Բաքըլոնի սնուցած բոլոր չարութիւններն ու խայտառակութիւնները մերկացնելու և նշաւակելու համար. անշուշտ Երկնաւոր վարդապետից ևս ծածուկ չէր այդ նեխեալ աշխարհի ապականութիւնը. գուցէ Նորա մաքուր զգացումներն ևս վիրաւորուում էին հպարտ հեթանոսներից անարգուած և ոտնակոխ եղած տեսնելով սուրբ քաղաքը. և եթէ քաջութիւն պէտք էր ճշմարտութիւնն ասելու համար՝ անշուշտ ոչ ոք Նորանից աւելի չունէր այդ քաջութիւնը: Բայց Յա գիտէր որ առանց իւր Հօր անօրէնութեան չէ այդ որ աշխարհաստան փարթամ Հռոմն իւր կարեւոր դերն ունէր կատարելու Նախախնամութեան ծրագրած պատմութեան մէջ, և որ ուրեմն իւր ժողովուրդը Աստուծոյ հնազանդած և հաւատարիմ դանուած կլինէր առաւել այն ժամանակ, երբ կայսերը կայսեր տար, փոխանակ զիւթական միջոցներով արտաքին հրաշքներով բռնի, իւր համար երջանկութիւն և փառաւոր ապագայ ձեռք բերել ձգտելու՝ ներքին վերանորոգութեան, հոգեւոր վերածնութեան և երանութեան ձգտել. ճանաչել կամենար, թէ ի՞նչն է իսկապէս աստուածահաճոյ, և այն՝ այն միայն տար Աստուծոյ, ինչ որ վայել է Նորան: Ուստի այդ իսկ պատճառաւ որ Նա յիրաւի ճշմարիտ էր և ճշմարտութեամբ էր ուսուցանում Աստուծոյ ճանապարհը որ ոչ ոքից երկիրդ չունէր և ոչ ոքի վերայ աշառութեամբ չէր նայում՝ քաջութիւն ունեցաւ Նա բոլոր փարիսեցիական գաղափարներն ու կեղծ ազգասիրական միտումներն արհամարհելու և պատուիրելու. «Երթայք, տուք զկայսերն կայսեր»։ — Եւ գու-

ցէ շատ քիչ հանգամանք նպաստել է այնչափ քրիստոնէութեան տարածմանն ու յառաջագիմութեանը որչափ այս մեծախորհուրդ պատուէրը: Մինչդեռ նախանշայող փարիսեցիների սուրն ամենայն դիւրութեամբ փշրուեցաւ լեզւոնների ուժի առաջ՝ քրիստոսի ս. խաչն էր որ նուաճեց Հռոմը և երկնաւոր Միոնի դռները բաց արաւ նորա տիրապետողների և հպատակների դիմաց: Աւետարանի քարոզիչները հետեւելով այն սկզբունքին, թէ «որ հակառակ կայ իշխանութեան, Աստուծոյ հրամանին հակառակ կայ» և թէ ուրեմն «հարկ է հնազանդ լինել ի՛շ միայն վասն բարկութեան, այլ և վասն խղճի մտացն», ամէն տեսակ նեղութիւն և հալածանք կրեցին հեթանոս իշխանութեան կողմից՝ առանց արտունջի, առանց ընդդիմութեան մինչև որ նորա սուրբ բթացաւ և նա ստիպուած եղաւ քրիստոսի եկեղեցւոյ ներքին բարոյական անպարտելի զօրութիւնը խոստովանել՝ զԱստուծոյն Աստուծոյ տալ ինչպէս և եկեղեցին զկայսերն կայսեր տուել էր:

Եւ այս հանդիսաւոր օրերում երբ մեր Օգոստափառ կայսեր պանծալի թագադրութեամբ բոլոր հպատակ ժողովուրդների համար գեղեցիկ առիթ է ներկայանում իրենց հաւատարմութեան զգացումներն արտայայտելու և արժանաւոր հարկը նուիրաբերելու Ղեկնապետի դահի առաջ, Հայաստանեայց ս. Եկեղեցին ևս կրկնել կարող է միայն այն, ինչ որ պատուիրել է իւր Երկնաւոր Հովուապետը. «Տուք զկայսերն կայսեր»: Իսկ եթէ հարցնենք ի՞նչ է պարտական մասնաւորապէս հայ ժողովուրդն իւր կայսեր, եթէ կամենանք մենք տալ ինչ որ կայսեր է պատկանում՝ պէտք է մեր աչքը դէպի պատմական մօտիկ անցեալը դարձնենք և այն օրերը յիշենք, երբ երկզուս արծիւն իւր հսկայական թեւերը հլուսիսից հարաւ պարզելով իւր հզօր հովանու ներքոյ առաւ մեր երկիրը: — Ինչպէս կարող է հայ ժողովուրդը մոռանալ այն անձկութեամբ լի վիճակը որի մէջ նա գտնուում էր մի դար առաջ. այն մեծ ոգեւորութիւնը որով

գիմնաւորեց նա Հիւսիսային կայսեր ազատարար զօրախումբներին: Արեւելեան փոքրիկ իշխանների քմահաճոյքներին խաղալիք մի դերի ամբողջ է նա այժմ, այլ զօրաւոր պետութեան շնորհիւ պատահական յարձակումներից ապահոված, քաղաքակրթութեան ճանապարհներով լուսաւոր արեւմուտքի հետ կապուած, քաղաքացիական ամէն տեսակ իրաւունքներ վայելող մի համայնք որի ձեռքի զրամբ յիշեցնում է նորան, ինչպէս երբեմն հռոմէական զրամբ հրեաներին, թէ ինչ է պարտական կայսեր: Եւ միայն զրամբ չէ յիշեցնում, բոլոր մեր հասարակական հաստատութիւնների վերայ կայ կայսեր պատկերը և գիրք, իբրեւ նշան, որ մենք բոլոր մեր արտաքին յարաբերութիւնների մէջ նորան պէտք է հպատակենք: Նորա սահմանած օրէնքների համաձայն ընթանանք:—Այժմ ևս պակաս չեն անշուշտ տալիս մի երկրում փարիսեցի փորձիչներ, որոնք ձմարտութեան և ազատութեան անունով շարժում են մարդոց օրինաւոր իշխանութեան դէմ: Եկեղեցին այդպիսի շարժումների քաջալերիչ լինել չէ կարող՝ ինչպէս որ նա քաջալերիչ չէ նաեւ այն անկոչ օտարականների, որոնք պատրաստ են ամենուրեք անհնազանդութիւն, հակառակութիւն, բանտարկութիւն գտնել: Աւաղ, անիրաւ նախատինք շատ են կրել մենք այդպիսիների կողմից, մինչ մեր ազգակիցները արեան ծովի մէջ լողալով անխուսափելի մահուան դէմ էին կռուում՝ զթութիւն և օգնութիւն ամէնից առաջ մեր հզօր պաշտպան Ամենողորմած կայսրից ակնկալում՝ նոքա չսոսկացին ի լուր աշխարհի աղաղակելու, թէ այդ թշուառները ամենածանր պատիժների արժանի չարագործներ են, իրենք են իրենց դահիճներին իրենց դէմ հրախրել: Մեր՝ նոցա արեւնակիցների, ամենաթեթեւ վշտի արտայայտութիւնը յանցանք համարեցին, ծիւղական մշտածմունքներ և զգացմունքներ վերագրեցին ու խռովարարներ հռչակեցին մեզ: Լուռ, անմիմունջ թախծութեամբ դիտում ենք մենք


այդ ամէնը և ասում. այդ ևս մեզ չի դաշխեցնում, մեր ուղիղ ճանապարհից չի շեղի, շատ անգամ ապացուցել ենք և երբ հարկը պահանջէ կրկին կապացուցանենք, թէ ինչպիսի հաւատարմութեամբ, ծառայել գիտենք մեր մարմնաւոր տէրերին, ինչպիսի արիւթութեամբ կանգնել կայսեր յաղթական զրօշակի ներքոյ: Մենք համոզուած ենք, որ ուղիղ հպատակութիւնը կեղծ ու պատիւ խօսքերով, արտաքին շրջուցիչ արարմունքներով չպէտք է արտայայտուի, որ հնազանդ պէտք է լինել իշխանութեան «ոչ միայն վասն բարկութեանն, այլ և վասն խղճի մտայն», որ մենք ամենայն արդարութեամբ կայսեր տալ ինչ որ կայսերն է՝ չենք կարող, եթէ չենք սովորել Աստուծոյ տալ ինչ որ Աստուծոյ է, ուստի և պարտք ենք համարում քննել թէ ինչ է թելադրում մեզ մեր ներքին բարոյական զգացումը, ինչ է պահանջում մեզից ինքն Աստուած իւր ձմարտութեան աւետարանով:

Գեղեցիկ զուգադիպութեամբ այս նոյն մայիսի զարնանային զուարթ օրերում, սրբազան թագադրութեան հանդէսներից յետոյ, Եւմիաճնի գեղեցիկ տօնախմբութիւններն են յաջորդում, և եթէ մէկով մեր, իբրեւ ընդարձակ կայսերութեան քաղաքացիների առաջ մեր վնահալետի բոլոր փառքն է պատկերացում, նորա դահից դէպի մեզ ծաւալած շրնորհներն են յիշեցուում՝ միւսով իբրեւ Հայայաստանայց եկեղեցւոյ զաւակների, հայ խեղճ ժողովրդի մի մի անդամների առաջ դրուում են այն ամէն հրաշալի տնօրէնութիւնները, որ Գրիգորի Մեծ Աստուածը այդ եկեղեցւոյ, այդ ժողովրդի պահպանութեան և յարատեւ կենդանութեան համար արել է: Ռուսիոյ մեծագոր կայսրները հեռու հիւսիսից իրենց բանակներն ուղարկելով և անհաւատների բռնութեան լծից մեզ ազատելով՝ ընդ միշտ երախտապարտ են կացուցել մեզ, որչափ ուրեմն երախտապարտ պիտի համարուինք երկրների Ամենազօր թագաւորին, որ իւր հրեշտակաց բանակների հետ իջնելով՝ լուծել է մեր վերայից խաւարի բռնութիւնը և յաւիտե-

նական երանութեան ճանապարհ բաց արել մեր առաջ: Արտաքին նշաններ պէտք չեն մեզ Աստուծոյ իշխանութիւնն ու ողորմութիւնը յիշեցնելու համար: Թէ իբրեւ անհատ ի սկզբանէ անտի և թէ իբրեւ ամբողջ ազգութիւն այն օրուանից: երբ կանգուն է Միաձնի կառուցած լուսեղէն տաճարը՝ Աստուծոյ պատկերն ենք կրում մենք մեր հոգու խորքում: Փրկչական նշանի դրոշմը մեր հոգեւոր ներքին կեանքի բոլոր դարձուածներում: Եւ եթէ նայսեր պատկերն անարդողը, իշխանութեան հըրամանին հակառակողը, ըստ առաքելական բանին, դատաստանի ներքոյ պէտք է ընկնի՝ ինչ պէսկարող է դատապարտելի չլինել նա: որ Աստուծոյ պատկերն է անարգում: երկնաւոր իշխանութեան հրամանին հակառակում: Մենք զիտենք: որ Աստուծոյ մեր հոգու մէջ գծած պատկերն եղծել: դարերի ընթացքում Նորա մեզ արած ամբաւ շնորհներն արհամարհել: Նորա բացարձակ հրամանին հակառակ կալ կնշանակէ՝ ուրանալ այն սկզբունքները: որոնք մեր իբրեւ մի ազգային ամբողջութեան, մի առանձին ինքնուրոյն եկեղեցւոյ, պատմական առաջնորդներն են եղել: այն առանձնայատկութիւնները, որոնք մեզ իբրեւ հայ մարդ: իբրեւ Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակ որոշում են: Նա: որ իւր այս պատմական կոչման իւր խղճի ներքին ձայնին դաւաճանում է: լաւ քաղաքացի լինել չէ կարող: Ուրպէս զի մենք իբրեւ հայ մարդ խղճի մօօք նայսեր արժանի հարկ հատուցանենք՝ հարկաւոր է: որ մեր մարդկային և քրիստոնէական բոլոր արժանապատուութեան գիտակից լինենք: հարկաւոր է որ նախ Աստուծոյ մեր կրճքի տախտակի վերայ դրոշմած գիրը կարդալ և ըստ այնմ՝ Նորան արժանի յարգ մատուցանել կարողանանք: — Այսպէս ահա կրկնակի սրբազան ոգևորութեամբ թող լեցուին հայ սրտերն այս նշանաւոր օրերում և ջերմագին աղօթքներ թող վեր ելնեն դէպի հայրերի Աստուածը: արեւշատութիւն մաղթելով մեր Աստուածապալկ թագաւորի և Մեծափառ Թագուհու համար: Թող փառապանծ նրեմլի և նախնային:

Եջմիածնի զանգակները հիւսիսից հարաւ միախառնեն իրենց վսեմ՝ զօղանջիւնը: քարոզ կարգալով բոլոր ծշմարիտ հաւատացեալներին: «Երթայք, տուք զնայսերն նայսեր և զԱստուծոյն Աստուծոյ»:

Կ. Վ.



ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՅՈՎՀԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԹՈՒՂԹԸ:

Առարատի նախորդ համարում (եր. 159) մենք խոստացել էինք շուտով հրատարակել Ձ. դարու քաղկեդոնական վէճերին վերաբերեալ մի շատ կարեւոր պատմական յիշատակարան: և ահա այս համարին իբրեւ յաւելում լոյս է տեսնում այդ յիշատակարանը: որ արտատրուած է Մայր Աթոռի մատենադարանի հ. 517 ձեռագրից: Նորա մանրամասն ուսումնասիրութիւնը ուրիշ առթի թողնելով: մենք համառօտ կականարկենք միայն այստեղ: որ նա առանձին նշանակութիւն ունի Ձ. դարի կեսերում մեր և օտար եկեղեցիների մէջ եղած յարաբերութիւնը պարզելու և որոշելու համար մեր մի քանի կաթողիկոսների հայրապետութեան՝ մանաւանդ Սերսէս Բ. Աշտարակեցու Դուինում գումարած ժողովի ժամանակը: ուր: ինչպէս յիշել ենք: մեր կարծիքով առաջին անգամ Քաղկեդոնի ժողովը մերժուեցաւ: Սակայն նոյն իսկ այս գրութեան ժամանակի որոշումն անյաղթելի դժուարութիւններ է ներկայացնում մեզ առ այժմ: — Ըստ Կաղանկատուցւոյ Աղուանից Աբաս կաթողիկոսը հայրապետական աթոռ է նստել հայկական թուականի սկզբում: ուրեմն 551 թ.-ին: և այնուամենայնիւ ժամանակակից է եղել Հայոց Յովհաննէս Բ. կաթողիկոսին: որի հայրապետութիւնը Չամչեանի հաշուելով տեւել է 533-ից մինչև 550-551 թ.: Այս Աբասին Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսը թուղթ է գրում իբրեւ յաջորդ Մակար և Եւստոքիոս պատրիարքների: որոնցից վերջինը դեռ կենդանի էր և իւր ներկայացուցիչներն ունէր Ե. կոչուած տիեզերական ժողովի մէջ: որ տեղի ունեցաւ 553